**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**25 հունիսի 2014 թվականի N Մ- 568 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ «ՓՅՈՒՆԻԿ» ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2014 թվականի հունիսի 23-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից՝ Մարսելի քաղաքապետարանի կողմից աջակցության նպատակով «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (680 տեղ, 9,259 կգ ընդհանուր քաշով, 5,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 4,280 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՑՈՒՑԱԿ

| Թիվ | Անվանումը | Քանակը | Ընդհանուր քաշը (կգ) |
|---|---|---|---|
| 1. | Հագուստի արկղ | 39 | 1225 |
| 2. | Սայլակ | 179 | 2506 |
| 3. | Անիվներով աթոռ | 6 | 46 |
| 4. | Անիվներով քայլակ | 6 | 42 |
| 5. | Քայլակ | 12 | 60 |
| 6. | Էլեկտրական ռադիատոր 1000 վատտ | 9 | 126 |
| 7. | Էլեկտրական ռադիատոր 2000 վատտ | 1 | 16 |
| 8. | Էլեկտրական սայլակ | 1 | 87 |
| 9. | Ոտքերը հանգստացնելու տուփ | 1 | 40 |
| 10. | Գիշերանոթ | 2 | 16 |
| 11. | Բժշկական գիշերանոթ | 2 | 2 |
| 12. | Աշխատանքային հագուստի պայուսակ | 4 | 48 |
| 13. | Սայլակի մասեր | 16 | 592 |
| 14. | Եռոտանի հենակ | 4 | 28 |
| 15. | Ծալվող քայլակ | 2 | 10 |
| 16. | Ձեռնափայտ | 19 | 57 |
| 17. | Սայլակի անիվ | 11 | 44 |
| 18. | Սայլակի տակդիր | 13 | 26 |
| 19. | Սպորտային կոշիկների արկղ | 1 | 12 |
| 20. | Ոտքերի տակդիր | 1 | 9 |
| 21. | Հիվանդին բարձրացնող սարք | 1 | 57 |
| 22. | Հագուստի արկղ | 5 | 125 |
| 23. | Դպրոցական աթոռ | 250 | 875 |
| 24. | Դպրոցական սեղան | 69 | 483 |
| 25. | Մեծ չափի դպրոցական սեղան | 2 | 38 |
| 26. | Գրքերի արկղ | 22 | 770 |
| 27. | Նեգատոսկոպի մոնիտոր | 1 | 17 |
| 28. | Արյան անալիզի սարք | 1 | 1900 |
| | | 680 | 9259 |

Հակոբ Աբրահամյան

"Հայաստանի հաշմանդամների
"Փյունիկ" միություն" ՀԿ նախագահ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 հունիսի 2014 թվականի N Մ - 569 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի հունիսի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված «KIA SORENTO» մակնիշի մարդատար ավտոմեքենան (2005 թվականի արտադրության, նույնականացման համարը KNEJC521855450830, 7,873.89 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, «ԱՄ ՄՁՄ» ՏՄ) և «Peugeot» մակնիշի բեռնատար ավտոմեքենան (2008 թվականի արտադրության, նույնականացման համարը VINVF3XVRHKH64109310, 13,300 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, «ԱՄ ՄՁՄ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունիսի 2014 թվականի N Մ - 570 - Ա**

**քաղ. Երևան**

# ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2014 թվականի հունիսի 20-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ անհատ բարերարներ Նիք Քանյանի, Մերի Քանյանի և Սուրեն Փիրջանյանի կողմից աջակցության նպատակով Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի («Lexus RX 350» մակնիշի 2011 թվականի արտադրության ավտոմեքենա, նույնականացման համարը՝ JTJZK1BAXB2003277, 26,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2500 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-571-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻԼԻՋԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 3/3.8-2/9003-14 և հունիսի 17-ի N 06/3-3/7314-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 02/4200-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 71,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Դիլիջան» միջազգային դպրոցի տարածքում ֆուտբոլի դաշտի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների իրականացում՝ 65,818,420 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ ծրագրի ավարտից հետո, վեցամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դիլիջանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահի կողմից

«02» հունիսի 2014թ.

**«Դիլիջան» միջազգային դպրոցի տարածքում ֆուտբոլի դաշտի կառուցում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Դիլիջան» ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» հիմնադրամի միջազգային դպրոցի տարածքում ֆուտբոլի դաշտի կառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի ՝ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - ՈՒԵՖԱ (Շվեյցարիա, 1260 Նիոն Ժնևի փողոց 46) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 71,500,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Դիլիջան» ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» հիմնադրամը (ՀՀ, քաղ, Երևան, Բաղրամյան 6, ՀՎՀՀ՝ 00108599) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014 թվականի հունիսի 2-ից մինչև 2014 թվականի օգոստոսի 31-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Խաղադաշտի հիմքի հողային աշխատանքների իրականացում, գրունտի մշակում, դրենաժային համակարգի մշակում և խողովակների տեղադրում, դիտահորերի տեղադրում, եզրաքարերի խրամատի մշակում, բետոնե եզրաքարերի իրականացում, խճի շերտի իրականացում, լվացված ավազային շերտի իրականացում, ոռոգման համակարգի կառուցում՝ շուրջ 66,500,000 դրամ, սկիզբը՝ 02.06.2014թ. - ավարտը՝ 31.08.2014թ.,<br>2. Խոտի սերմի և պարարտանյութերի ներմուծում՝ շուրջ 5,000,000 դրամ, սկիզբը՝ 02.06.2014 թ. - ավարտը՝ 31.08.2014թ., |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Խաղադաշտի հիմքի հողային աշխատանքների իրականացում, գրունտի մշակում, դրենաժային համակարգի մշակում և խողովակների տեղադրում, դիտահորերի տեղադրում, եզրաքարերի խրամատի մշակում, բետոնե եզրաքարերի իրականացում, խճի շերտի իրականացում, լվացված ավազային շերտի իրականացում, ոռոգման համակարգի կառուցում՝ 65,818,420 դրամ,<br>2. Խոտի սերմի և պարարտանյութերի ներմուծում՝ 5,000,000 դրամ,<br>3. Չնախատեսված ծախսեր՝ 681,580 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Դիլիջանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միության (ՈՒԵՖԱ)՝ ֆինանսական աուդիտ և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-572-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/8638-14 և հունիսի 10-ի N ՎՄ/3-7/6951-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 9-ի N ԱՄ/22.2/5625-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական նշանակության ապրանքների (40 տեղ, 6,070 կգ ընդհանուր քաշով, 937,915 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-573-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 3/3.8-2/9004-14 և հունիսի 17-ի N 06/3-7/7310-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N ԱՄ/22.2/5982-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «International Services Corporation» ոչ առևտրային կազմակերպության կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (586 տեղ, 4,874.19 կգ ընդհանուր քաշով, 102,829.13 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,172 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-574-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 13-ի N 3/3.8-2/8868-14 և հունիսի 16-ի N 06/3-7/7202-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 13-ի N 1/06/578-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով կանանց ազգային հավաքականի համար ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (11 տեղ, 77.7 կգ ընդհանուր քաշով, 4,226.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-575-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 13-ի N 3/3.8-2/8867-14 և հունիսի 18-ի N 06/3-4/7384-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 13-ի N 1/06/579-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հանդբոլի եվրոպական ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 600 հանդբոլի գնդակի (30 տեղ, 253.5 կգ ընդհանուր քաշով, 10,240 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,450 եվրո փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ-576-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/8639-14 և հունիսի 10-ի N ՎԱ/3-3/6919-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-380-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պայքար Գրիգորյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52175959) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե թասակների և սալաքարերի մատակարարում՝ 3,461,705 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-577-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 4-ի N 3/3.8-2/8396-14 և հունիսի 5-ի N ՎՄ/3-3/6740-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լեգիոն Պարիսպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00075973) 2014 թվականի մայիսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 292,720 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                   Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-578-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-2/9180-14 և հունիսի 20-ի N 06/3-3/7545-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ Լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2014 թվականի մայիսի 5-ին կնքված՝ N 02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կինոդահլիճի արգելքի պատրաստում՝ 45,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-579-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-2/9178-14 և հունիսի 19-ի N 06/3-3/7473-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌԵԴ-ՓՈԻՆԹ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2014 թվականի մարտի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 4,000 բուկլետի պատրաստում՝ 175,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-580-Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 3/3.8-2/8985-14 և հունիսի 17-ի N 06/3-3/7312-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2014 թվականի մայիսի 9-ին կնքված՝ N ՎՏՀ/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե երեսապատման սալիկների ձեռքբերում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-581-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 18-ի N 3/3.8-2/9040-14 և հունիսի 19-ի N 06/3-3/7462-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սամսթոուն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01845019) 2014 թվականի հունիսի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 300 քառ. մետր փայլեցված տրավերտինե սալիկների ձեռքբերում՝ 2,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-582-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 3/3.8-2/9248-14 և հունիսի 19-ի N 06/3-3/7469-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիտան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801404) 2014 թվականի հունիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական սարքավորումների և պիտույքների ձեռքբերում՝ 268,490 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-583-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N Մ-917-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-2/9179-14 և հունիսի 20-ի N 06/3-3/7541-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2014 թվականի հունիսի 13-ի N Ֆ/1 053 գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-917-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը (2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1136-Ա որոշման խմբագրությամբ) շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ   Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Ռ. Հայրապետյանի կողմից
«13» հունիսի 2014թ.

## «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»

### Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գյումրու«Մուշ-2» թաղամասի 10/5 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն-ՈՒԵՖԱ, (Շվեյցարիա, ժնև), Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա-ՖԻՖԱ, (Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ ք. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Գյումրի քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,537,200,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ ք. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) (Գյումրիի «Մուշ-2» թաղամասի 10/5 հասցեում կառուցվող ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոց) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2011թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2014թ. դեկտեմբեր 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 870,280,200 դրամ,<br>2. Խաղադաշտերի կառուցում՝ 336,584,800 դրամ,<br>3. Կահավորում՝ 23,855,000 դրամ,<br>4. Շինարարական նյութերի, արհեստական խոտածածկի, ներքին հարդարման պարագաների և լուսավորության սարքավորումների ներմուծում՝ 306,480,000 դրամ: |

7/161

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - մարզադպրոցի կառուցման նախագծի կազմում՝ 4,250,000 դրամ,<br>- գլխավոր մասնաշենքի շինարարական և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 504,645,984 դրամ,<br>- գլխավոր մասնաշենքի էլեկտրատեխնիկական աշխատանքներ և անվտանգության համակարգերի կառուցում՝ 49,632,640 դրամ,<br>- կաթսայատան, ջեռուցման և գազաֆիկացման համակարգերի կառուցում՝ 7,129,140 դրամ,<br>- գլխավոր մասնաշենքի օդափոխության համակարգերի կառուցում՝ 23,317,183 դրամ,<br>- ջրամբարի, պոմպակայանի և ոռոգման համակարգի կառուցում՝ 140,506,390 դրամ,<br>- ցանկապատում և պարսպապատում՝ 104,310,550 դրամ,<br>- շինության հարող տարածքի բարեկարգում և ասֆալտապատում՝ 22,925,500 դրամ,<br>- ավտոկայանատեղի կառուցում՝ 13,562,813 դրամ,<br>- կահավորում՝ 23,855,000 դրամ:<br>Նախատեսվում է կառուցել նաև երկու արհեստական խոտածածկով խաղադաշտ՝ 154,140,000 դրամ (որի համար ՖԻՖԱ-ն տրամադրել է 420,000 ԱՄՆ-ի դոլար) և վեց ստանդարտ չափսերի խաղադաշտ՝ 182,444,800 դրամ:<br>Լուսավորության սարքավորումների՝ 51,380,000 դրամ, ինչպես նաև շինանյութի, արհեստական խոտածածկի և ներքին հարդարման պարագաների ներմուծում՝ 255,100,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Գյումրու քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության քաղաքական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ՝ Գևորգ Պապիկյան

7/16/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-584-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1148-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9110-14 և հունիսի 19-ի N 06/3-3/7467-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2014 թվականի հունիսի 13-ի N Ֆ/1 054 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի N Մ-917-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1148-Ա որոշման (2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1137-Ա որոշման խմբագրությամբ) 1-ին կետի 4-րդ ենթակետում «825,466,500 դրամի չափով» բառերը փոխարինել «884,306,400 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-585-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N 07/80-2/7975-14 և հունիսի 25-ի N 06/3-7/7824-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 1/05/620-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ձյուդոյի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ձյուդոյի մարզահագուստի (100 հատ՝ մեկ տեղ, 286 կգ ընդհանուր քաշով, 7,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 730 եվրո, «Արարատյան» ՍՄ) և երկու լրակազմ ձյուդոյի մարզագորգի (144 հատ՝ 3 տեղ, 2,665 կգ ընդհանուր քաշով, 12,577 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 3,685 եվրո փոխադրման և այլ ծախսերը, «ՄՃՓ» ՍՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-586-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7875-14 և հունիսի 25-ի N 06/3-7/7736-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N ՖԲ/ԱնՄ-4/4929-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (մակարոնային արտադրանք՝ 2,000 տեղ, 20,400 կգ ընդհանուր քաշով, 45,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա և 2014 թվականի ապրիլի 4-ի N Մ-257-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ն. 7/7.7

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 06708 12.05.2014

| N N | Ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Շահառուները ըստ մարզերի | | Շահառուների քանակը | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոն | կգ | 20000 | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 772 |
| | | | | | Այգուտ | 164 | 1,710 |
| | | | | | Մարտունի | 73 | 761 |
| | | | | | Դպրաբակ | 81 | 845 |
| | | | | | Վահան | 188 | 1,960 |
| | | | | | Կալավան | 23 | 240 |
| | | | | | Բարեպատ | 6 | 63 |
| | | | | | Զորավանք | 31 | 323 |
| | | | | | Անտառամեջ | 22 | 229 |
| | | | | | Գավառ | 61 | 636 |
| | | | | | Թթուջուր | 81 | 845 |
| | | | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 532 |
| | | | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 177 |
| | | | | | Արտաշատ | 16 | 167 |
| | | | | | Գետազատ | 39 | 407 |
| | | | | | Մրգանուշ | 16 | 167 |
| | | | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 136 |
| | | | | | Սևաբերդ | 41 | 427 |
| | | | | | Զորաղբյուր | 18 | 188 |
| | | | | | Արզական | 38 | 396 |
| | | | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 500 |
| | | | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 156 |
| | | | | | Իջևան | 18 | 188 |
| | | | | Երևան | | 3201 | 33,374 |
| | Ընդամենը | | | | | 4335 | 45,200 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն*　　　　*Հ. Ղազարյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-587-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 3/3.8-2/9265-14 և հունիսի 25-ի N 06/3-4/7553-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) բնական դեկորատիվ ծառեր՝ 360 տեղ, 5,740 կգ ընդհանուր քաշով, 9,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1,500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

2) պլազմային էկրանի մոդուլներ և բեռնատար ավտոմեքենայի պահեստամասեր՝ 3 տեղ, 1,208 կգ ընդհանուր քաշով, 37,985 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,590 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

3) ավտոմեքենայի պահեստամասեր՝ 3 տեղ, 192 կգ ընդհանուր քաշով, 3,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 410 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

4) կրծքանշաններ՝ մեկ տեղ (600 հատ), 1.8 կգ ընդհանուր քաշով, 168 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 110 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ՈՐՈՇՈՒՄ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-588-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7924-14 և հունիսի 25-ի N 06/3-3/7766-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոլարթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05538574) 2014 թվականի հունիսի 13-ին կնքված՝ N SMI-20140613 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային մարտկոցների նախագծման, պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 24,766,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-589-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-152-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7898-14 և հունիսի 26-ի N 06/3-3/7915-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2014-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-152-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված՝ N 020614-01/YSSP-13-33_Egac պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր պարագաների և նյութերի ձեռքբերում՝ 134,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ-590-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-152-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն 1000 գ/մ d=50 մմ-ոց և 2000 գծ/մ 75 մմ-ոց սինթետիկ խողովակներ, ձևավոր մասեր, կցատագործի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք: 2014թ. հունիսի 10-ից հուլիսի 1-ը կկատարվեն ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 10-ը կիրականացվեն խրամուղիների փորման, խողովակների տեղադրման և լիցքի աշխատանքները:<br>Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 21.260.600 դրամ, որից 2.100.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 19.160.600 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ-ի կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Ավտոմեքենայի վառելանյութ և շահագործում 175 000 դր<br>2. Գրասենյակային պարագաների գնում 65000 դր<br>3. Կոմունալ ծախսեր 65 000 դր<br>4. Փոստային և հանրային կապեր 25 000 դր<br>Ընդամենը կազմակերպչական՝ 330 000 դր |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Շիրակի մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, «Շիրակցրմուղ կոյուղի» ՓԲԸ-ի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատման և վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը:<br>Մարզպետարանը, համայնքապետարանն ու «Շիրակջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները:<br>Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 607 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N 3/3.8-2/8924-14 և հունիսի 17-ի N 06/3-3/7316-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 02/4109-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 07/07.1/3206-14, և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի հունիսի 12-ի N 01/ 2656-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 16,255,500 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վահրամաբերդի համայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2014 թվականի հունիսի 10-ին կնքված՝ N 152/WSR-14-16/07/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղում խմելու ջրի ջրագծերի անցկացման աշխատանքների իրականացում՝ 14.630,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարասյանի կողմից
«10» հունիսի, 2014.թ.

«Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում. d 50 մմ խողովակի 2500գ/մ հատվածի հատվածի փոխում նորով |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործը | Ռենովաբիս Գերմանիա բարեգործական կազմակերպություն Կարդինալ Դյոփֆներ Հաուս,Դոմբերգ 27, D-85354, Ֆրայզինգ, Գերմանիա |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գյումրի, Դ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ՀՎՀՀ՝ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղ, բնագավառը՝ բարեգործական ջրամատակարարում |
| 6 | Ծրագրի բյուջեն | 16.255.500 դրամ, որից 1.625.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 14.630.500 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի բնակիչները |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 4 ամիս, հունիս 10- հոկտեմբեր 10, 2014 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2500 գ/մ d=50 մմ-ոց խողովակաշարերի մոնտաժում: Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 16.255.500 դրամ, որից 1.625.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 14.630.500 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն 2500 գ/մ d=50 մմ-ոց սինթետիկ խողովակներ, ձևավոր մասեր, կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք: 2014թ. հունիսի 10-ից հուլիսի 1-ը կկատարվեն ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 10-ը կիրականացվեն խրամուղիների փորման, խողովակների տեղադրման և լիցքի աշխատանքները: Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 16.255.500 դրամ, որից 1.625.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 14.630.500 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ-ի կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Ավտոմեքենայի վառելանյութ և շահագործում 175 000 դր<br>2. Գրասենյակային պարագաների գնում 65000 դր<br>3. Կոմունալ ծախսեր 65 000 դր<br>4. Փոստային և հանրային կապեր 25 000 դր<br>Ընդամենը կազմակերպչական՝ 330 000 դր |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Շիրակի մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, «Շիրակջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ |
| 13 | Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանը, համայնքապետարանն ու«Շիրակջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 608 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2014 թվականի հունիսի 12-ի թիվ 335 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9096-14 և հունիսի 20-ի N 06/3-3/7511-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Տրդատ» բաց խորանի տարածքի բարեկարգում» ծրագրի մասին» N Մ-190-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ կետի 1-ին ենթակետերում ու որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «20,661.520 դրամ» բառերը փոխարինել «29,510.849 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «2013 թ. օգոստոսի 23-ին կնքված N 05Գ/013 պայմանագիր» բառերը փոխարինել «2014 թ. մայիսի 15-ին կնքված N 02Գ/014 պայմանագիր» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 609 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 11-ի N 3/3.8-2/8731-14 և N ՎՄ/3-7/7009-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանից, անհատ բարերար Հայկ Դիդիգյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված մարդասիրական բեռի՝ մարմարի սալիկների (37 տեղ, 47,500 կգ ընդհանուր քաշով, 29,371 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,160 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի շինարարության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՍՏԱՑՎԱԾ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 610 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N 3/3.8-2/8923-14 և N 06/3-7/7220-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանից անհատ բարերար Հայկ Դիդիզյանի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված մարդասիրական բեռի՝ մարմարի մոնոլիտ սալերի (2 տեղ, 25,500 կգ ընդհանուր քաշով, 22,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 611 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/8627-14 և հունիսի 9-ի N ՎՄ/3-7/6879-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պարաֆինի (790 տեղ, 18,580 կգ ընդհանուր քաշով, 32,369.3 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է և անհատույց հանձնվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմաձուլարանին՝ ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 612 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՄՅԱՆ ԽՑԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-1/9094-14 և 06/3-3/7459-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 02/4191-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 18,875.000 դրամ արժողությամբ «Երեմյան խցերի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լ.Ա.Ն.Ա. Էդեն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03531534) 2014 թվականի մայիսի 29-ին կնքված N ԼՎ-001-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեփական արտադրության փայտե կահավորանքի տրամադրում և տեղադրում՝ 18,875.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«12» հունիսի 2014 թ.

7/4

Երեմյան խցերի կահավորում

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Երեմյան խցերի համար Լ.Ա.Ն.Ա. Էդեն ՓԲԸ-ից փայտե կահավորանքի ձեռք բերումն ու տեղադրումն է: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 18,875,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակիցները և հյուրերը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հունիսի 2014թ. – 31 սեպտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում կահավորել Երեմյան խցերը:<br>Աշխատանքներն իրականացվելու են «Լ.Ա.Ն.Ա. Էդեն» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 03531534, ՀՀ, Ք. Երևան, Քանաքեռ 1-ին փող., թիվ 12) կողմից՝ պայմանագրեր N ԼՎ-001-14 կնքված 29.05.2014թ.՝ 18,875,000 ՀՀ դրամով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 հունիսի 2014թ. – 31 սեպտեմբերի 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել փայտե կահավորանքի ձեռք բերում և տեղադրում՝ 18,875,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 613 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9095-14 և 06?3-3?7446-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 02/4195-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 5,997.000 դրամ արժողությամբ «Հին Վեհարանի թանգարանի ներքին հարդարում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվանտ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01559224) 2014 թվականի մայիսի 29-ին կնքված N 08Ա/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վարագույրների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 5,997.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«12» հունիսի 2014 թ.

7/3

Հին Վեհարանի ներքին հարդարում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին Վեհարանի թանգարանի համար ձեռք բերել և տեղադրել վարագույրներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 5,997,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 29 մայիսի 2014թ. – 30 հունիսի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում ձեռք բերել և տեղադրել վարագույրներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին Վեհարանի թանգարանի շենքում՝ 5,997,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Եվանտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից (ՀՎՀՀ 01559224, ՀՀ, Ք. Երևան, Իսահակյան 38/60)՝ պայմանագիր կնքված 29.05.2014թ.:Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 29 մայիսի 2014թ. – 30 հունիսի 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել վարագույրների ձեռք բերում և տեղադրում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին Վեհարանի թանգարանի շենքում՝ 5,997,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկանք: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 614 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-397-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 հունիսի 10-ի N 3/3.8-2/8675-14 և հունիսի 13-ի N 06/3-3/7125-14 եզրակացությունները.* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Էջմիածնում՝ Մայր Աթոռին կից մանկական այգու և կենտրոնի կառուցում» N Մ-397-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01503291) հետ 2014 թվականի հունվարի 10-ին կնքված N ՆՊ 001-ՀԱ 14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային աշխատանքների իրականացում՝ 5.000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 615 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՌՈՒՑԵՆՔ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-2/8515-14 և ՎՄ/3-3/6856-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 4-ի N 02/3695-14, Հայաստանի Հանրարպետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 5-ի N- ՋԲ/ԱնՄ-4/4301-14 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 2-ի N 01/2455-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 237,881,369 դրամ արժողությամբ «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
«10» հունիս 2014թ.

(Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում)

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հզորացնել Հայաստանի թիրախային խոցելի համայնքների դիմակայունությունը աղետներին նախապատրաստվելու, կանխարգելելու և արձագանքելու հարցում Հայկական Կարմիր Խաչի ընկերության՝ Աղետների ռիսկի նվազեցման համայնքային մոդելի ամփոփման և տարածման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Եվրոխորհուրդի մարդասիրական օգնությունների բաժինը և Դանիական, Իսլանդական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունները |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի, Արթիկ, Առափի, Սառնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան, Պեմզաշեն, Մեծ Սեպասար, Կապս, Կեթի, Շիրակ, Արեգնադեմ, Ջաջուռ, Ձորաշեն, Շիրակավան և Բերդաշեն քաղաքային և գյուղական համայնքներ:<br>Աղետների կառավարման բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **237.881.369 ՀՀ դրամ /437.676 Եվրո/ - առանց ԱԱՀ** |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի և Արթիկ քաղաքային համայնքների, ինչպես նաև ծրագրի առաջին երկու փուլերում արդեն իսկ ընդգրկված/գործող Առափի, Սառնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան, Պեմզաշեն Մեծ Սեպասար, Կապս, Կեթի, Շիրակ, Արեգնադեմ և նոր ընդգրկվող Ջաջուռ, Ձորաշեն, Շիրակավան և Բերդաշեն գյուղական համայնքների բնակչություն: Համայնքների ընտրությունը կատարվել է Շիրակի մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ՝ հաշվի առնելով համայնքների՝ աղետների նկատմամբ ռիսկը, աղետների կրկնման հաճախականությունը և հարուցվող վնասները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.05.2014 – 30.09.2015 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | <u>Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ երեք ուղղություններով՝</u><br>1. Համայնքային մակարդակում աղետների ռիսկերի նվազեցման մոդելը |



| | | |
|---|---|---|
| | | տեղայնացնել և համապատասխանեցնել համայնքային օրենսդրական դաշտին, օգտագործելով փորձված մեթոդաբանությունը, որը կարող է ինտեգրվել համայնքային զարգացման պլանավորման գործընթացում այլ համայնքներում օգտագործելու պայմանով:<br>2. Ամրապնդել աղետների ռիսկի կառավարման կարողությունները համայնքային, մարզային և ազգային մակարդակներում, ներառյալ ինստիտուցիոնալ կապերը և շահերի պաշտպանությունը:<br>3. Համայքային մակարդակում ԱՌՆ արդյունավետ փորձի լուսաբանում Հարավային Կովկասի և գլոբալ ԱՌՆ հարթակի հիմնական շահագրգիռ կողմերի այդ թվում Կարմիր Խաչի/Մահիկի շարժման գործնկերների միջև:<br><br><u>Ծրագրի շրջանակներում ըստ ուղղությունների՝ նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝</u><br>1. Առաջին ուղղություն<br>1.1. Համայնքային թիմերի համար կազմակերպել վարժանքներ մարզային/ տեղական իշխանությունների հետ համատեղ, և ապահովել փորձի փոխանակում առկա և նորաստեղծ համայնքային թիմերի միջև: /բյուջեն **10.271.253** դրամ, ժամանակահատված 01.09-30.11, 2014թ. և 01.04-31.08, 2015թ./<br>1.2. Կազմակերպել դասընթացներ առկա և նորաստեղծ համայնքային թիմերի համար, թիմերին տրամադրել համապատասխան գույք: /բյուջեն **57.564.775** դրամ, ժամանակահատված 01.06-30.09.2014թ. և 01.02-30.04.2015թ./<br>1.3. Թիրախային համայնքներում իրականացնել խոցելիության և կարողությունների գնահատում (ԽԿԳ), օգտագործելով «Ով որտեղ ինչ է անում» մոտեցումը և Խոցելիության Վերլուծության Ընդհանուր Գործիքները: Մշակել/թարմացնել ԽԿԳ զեկույց յուրաքանչյուր թիրախային համայնքի համար: /բյուջեն **7.759.149** դրամ, ժամանակահատված 01.06-31.10.2014թ./<br>1.4. Թիրախային համայնքներում կազմակերպել Կլիմայի Փոփոխության Հարմարվողականության/ կենսապայմանների պաշտպանության դասընթացներ: /ժամանակահատված բյուջեն **6.048.842** դրամ, 01.10-30.11.2014թ./<br>1.5. Տրամադրել աջակցություն 6 ջրհեղեղավտանգ տարածքներում գտնվող թիրախային համայնքներին ստեղծելու/ զարգացնելու վաղ ազդարարման կարողություններ: /բյուջեն **4.500.263** դրամ, ժամանակահատված 01.08.2014թ. – |

| | | |
|---|---|---|
| | | 1.6. Թիրախային համայնքներում իրականացնել փոքրամասշտաբ կանխարգելման ծրագրեր համայնքային իշխանությունների և բնակչության հետ համատեղ: /բյուջեն **35.165.097** դրամ, ժամանակահատված՝ 01.07-31.10.2014թ. և 01.03-01.30.2015թ./<br>1.7. Թարմացնել, մշակել և տարածել ԱՌՆ ուսուցողական և հաղորդակցության նյութեր՝ ծրագրի թիրախային համայնքներում: /բյուջեն **48.318.039** դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.08.2014թ./<br>1.8. Կազմակերպել դասընթացներ շահառու դպրոցների ուսուցիչների համար՝ ԱԲՊ մշակումը ավելի ծավալելու, ԱԲՊ մրցույթների կազմակերպելու և ԱԲՊ վերաբերյալ տեղեկատվության և նյութերի բաշխման համար: /բյուջեն **8.699.938** դրամ, ժամանակահատված՝ 01.07-31.10.2014թ./<br>1.9. Նպաստել շահառու դպրոցների հակաիրդեհային համակարգի արդիականացմանը և աջակցել տեղական իշխանություններին և համապատասխան նախարարություններին դպրոցների տարահանման պլանների արդիականացման/ վերանայման հարցում: /բյուջեն **480.463** դրամ, ժամանակահատված՝ 01.09.2014թ. մինչև 31.05. 2015թ./<br>1.10. Ծրագրի նախնական և ամփոփիչ ուսումնասիրություն: /ժամանակահատված՝ 01.06-31.07.2014թ. և 01.08-30.09.2015թ./<br><br>2. Երկրորդ ուղղություն<br>2.1. Համայնքային և մարզային մակարդակներում կազմակերպել համակարգման և տեղեկատվության փոխանակման հանդիպումներ կլոր սեղանի շուրջ՝ հիմնական շահագրգիռ կողմերի հետ համատեղ: /բյուջեն **5.913.380** դրամ, ժամանակահատված՝ 15.05.2014թ. և 30.09.2015թ./<br>2.2. Նպաստել համայնքային գործողությունների պլանի մշակմանը/արդիականացմանը/հաստատմանը, և նպաստել ԱՌՆ համար նախատեսված ծախսերի ներառմանը համայնքային բյուջեներում, ինչպես նաև շեշտադրել ԱՌՆ դերը համայնքային զարգացման և տարեկան պլաններում: /բյուջեն **394.046** դրամ, ժամանակահատված՝ 01.07.2014թ. և 30.09.2015թ./<br>2.3. Աջակցել Շիրակի մարզի ԱՌՆ թիմին կարողությունների ամրապնդման գործընթացին, ՀՀ ԱՌՆ Ազգային Պլատֆորմի գործունեության շրջանակներում: /բյուջեն **3.541.511** դրամ, ժամանակահատված՝ 01.07.2014թ. և 30.09.2015թ./<br>2.4. Հայկական Կարմիր խաչի ընկերության Աղետներին արձագանքման պլանի վերանայման գործընթացին մասնակցություն և աջակցություն: / ժամանակահատված՝ 10.01-30.09.2015թ./ |

4

| | | |
|---|---|---|
| | | 2.5. Կոնսորցիումի գործընկերների կողմից կազմակերպված Մարզային հրահանգչային դասընթացներ, սեմինարներ, հետևյալ թեմաներով. Սոցիալ-հոգեբանական աջակցություն, ներառյալ «Երեխաների դիմակայունությանը ուղղված ծրագիրը»; Արձագանքման պլանավորում; Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը համայնքային մակարդակում և կենսապայմանների պաշտպանություն, մարդասիրական իրավունք: /բյուջեն **8.168.955** դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.10.2014թ. և 10.01-30.06.2015թ./<br><br>**3. Երրորդ ուղղություն**<br>3.1 «ԱՌՆ համայնքային մոդելի» և «Լավագույն փորձեր և դասեր» զեկույցի մշակում և բաշխում տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային հիմնական գործընկերներին կլոր սեղանների, միջազգային կոնֆերանսների ու ԿԽ և ԿՄ գործընկերների միջև փոխանակման այցելությունների ընթացքում: /բյուջեն **2.146.861** դրամ, ժամանակահատված՝ 01.05–30.09.2015թ./<br>3.2 Կազմակերպել ԱՌՆ խորագրով հանրային միջոցառումներ: /բյուջեն **1.549.004** դրամ, ժամանակահատված՝ 01-31.10.2014թ. /<br>3.3 Եռամսյակային կոնֆերանսների Կազմակերպում կոնսորցիումի գործընկերների և այլ համապատասխան ԿԽ և ԿՄ շահառուների միջև Skype-ի միջոցով:<br>3.4 Մասնակցել Հարավային Կովկասի/ Կենտրոնական Ասիայի «Լավագույն փորձ և քաղած դասեր» սեմինարներին: /բյուջեն **1.434.866** դրամ, ժամանակահատված՝ 01.09.2014թ.-30.09.2015թ./ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ձևավորված 14 համայնքային թիմերի և նախատեսված 4 նոր թիմերի համար ձեռք է բերվելու համապատասխան գույք /սաղավարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ, վրան և այլն/, որի գումարը կազմում է 35.871.660 դրամ: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արձագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին: Բնակչության իրազեկման բարձրացման միջոցառումների իրականացման նպատակով տպագրվելու են ուսումնական նյութեր, որոնց գումարը կազմում է 47.991.933 դրամ: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական պարագաների համար՝ անհրաժեշտ |

| | | |
|---|---|---|
| | | մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, ինչպես նաև թիրախային համայնքների վաղ ազդարարման կարողությունները զարգացվնելու համար տրամադրվելու է տեխնիկական աջակցություն և գույք և իրականացվելու են համայնքային փոքրածավալ կանխարգելման ծրագրեր, որոնց գումարը կազմում է 118.092.849 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 35.924.927 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է Շիրակի մարզպետարանի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ հատկապես նրա Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, Շիրակի մարզային փրկարար ծառայության և Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հետ, "Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ" հիմնադրամի, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և նրա Շիրակի մարզային ստորաբաժանման, 20 թիրախային քաղաքային և գյուղական համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են եռամսյա մարզային համակարգման հանդիպումներ, որը ղեկավարվելու է Շիրակի մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսեկան, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Հայաստանյան գրասենյակի կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է Շիրակի մարզում իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի միջանկյալ և ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպումներ Երևանում և Շիրակի մարզում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 616 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1076-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/8674-14 և հունիսի 13-ի N 06/3-3/7135-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյան 21, ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին» N Մ-1076-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էկոնոմիկա և իրավունք տեղեկատվական հետազոտական կենտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00023529) 2013 թվականի մայիսի 7-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Աջակցություն սիրիահայերին» ծրագրի շրջանակներում դասընթացների կազմակերպում՝ 305.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 617 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂԻ «ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9091-14 և հունիսի 23-ի N 06/18-4/7460-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել հոլանդական Global Aid Network բարեգործական (ոչ առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (609 տեղ, 9000 կգ ընդհանուր քաշով, 2650 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3240 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը (բաշխման ցանկը կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ*

*Բեռի բաշխման ցանկ* 7/14.13

*Բեռը* տրամադրվելու է մարզի հետևյալ դպրոցներին և ձեռնարկություններին

մասնավորապես՝

1. 150 աշակերտական սեղան /օգտագործված/-150 աշակերտական աթոռ /օգտագործված/,1 հատ գրասեղանի աթոռ/օգտագործված/, 2 հատ համակարգիչ / օգտագործված /- Բյուրականի միջն. դպրոցին
2. 25 սեղան/օգտագործված/- 25 աթոռ /օգտագործված/,1 հատ գրասեղանի աթոռ/օգտագործված/, 1 հատ համակարգիչ/ օգտագործված /- Շղարշիկի միջն. դպրոցին
3. 30 սեղան /օգտագործված/ ,30 աթոռ/օգտագործված/,1 հատ գրասեղանի աթոռ/օգտագործված/, – Շամիրամի հիմն. դպրոցին
4. 11 հատ երեխաների կրկնակի մահճակալներ(օգտագործված), 1 հատ գրասեղանի աթոռ/օգտագործված/ - Ուջանի <<Հովիտ>> մանկապարտեզին
5. 1 հատ հիվանդանոցի մահճակա լ(օգտագործված),15 սեղան(օգտագործված) - Երևան բ ժշկական կենտրոնին
6. 52 արկղ հագուստ (օգտագործված) - Ուջանի միջնակարգ դպրոցի աշխատողներին և աշակերտներին

Մնացած 20 աշակերտական սեղան /օգտագործված/, 35 աթոռները /օգտագործված / , 6 հատ գրասեղանի աթոռներ (օգտագործված), 27 համակարգիչները (օգտագործված), 14 էկրանները(օգտագործված), 8 հատ սպորտային մատերը մնում են Ուջանի միջնակարգ դպրոցում:

Դպրոցի տնօրեն /Ա. Հարությունյան /

հեռ./tel +374 093-21-63-93

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 618 - Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7794-14 և N 06/3-7/7832-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ուկրաինայից, անհատ բարերար Ֆրունզե Ղազարյանի միջոցներով, Հայաստանի Հանրապետության Իջևանի քաղաքապետարանի հասցեով ստացված մարդասիրական բեռի՝ խաղասարքերի (130 տեղ, 4261 կգ ընդհանուր քաշով, 14,345 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,100 ԱՄՆ-ի դոլար, ՄԾՓ ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Իջևան համայնքի քաղաքային զբոսայգում տեղադրելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Իջևանի քաղաքապետարանին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրա-պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 619 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7808-14 և հունիսի 26-ի N 06/3-7/7921-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Չինաստանից, անհատ բարերար Հայկ Դիդիզյանի միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ մարմարե սալերի (19 տեղ, 21,500 կգ ընդհանուր քաշով, 24,810 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 620 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՄԻԴԻԱ-ՇԱՆԳԱԼ» ԵԶԴԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7799-14 և N 06/3-7/7737-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Լեհաստանից անհատ բարերար Միրզա Յոլոյի Սլոյանի միջոցներով, «ՄԻԴԻԱ-ՇԱՆԳԱԼ» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի՝ տուայի տնկիների և եղևնիների (815 տեղ, 18,120 կգ ընդհանուր քաշով, 12,700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԱՃՓ ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում գտնվող «Զիարատա Եզդիա» եզդիների սրբատեղիի, ինչպես նաև հայ և եզդի ժողովուրդների բարեկամության պուրակի բարեկարգման համար:

2. «ՄԻԴԻԱ-ՇԱՆԳԱԼ» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 621 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 3/3.8-2/9251-14 և N 06/3-3/7653-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բետոնագործ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02225151) 2014 թվականի մայիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար մետաղապլաստե պատուհանների պատրաստում և տեղադրում՝ 12,274,600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Իզոռուֆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00443333) 2014 թվականի մայիսի 26-ին կնքված N 26/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար ջրամեկուսիչ նյութերի մատակարարում՝ 1,895,900 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 622 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7871-13 և N 06/3-3/7904-14 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշման (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա որոշման խմբագրությամբ) 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 1.515.000.000 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է):

2. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ (ՀՎՀՀ՝ 04703401) 2014 թվականի մայիսի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է Հովհաննես Կոզեռնի փողոց 11 հասցեում գտնվող 298.06 քառ. մետր մակերեսով հողամասի անհատույց նվիրաբերություն՝ 115,624.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և Հովհաննես Կոզեռնի փողոց 11/1 հասցեում գտնվող 1005.0 քառ.մետր մակերեսով հողամասի անհատույց նվիրաբերություն՝ 401,000.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն
Արշակ Կարապետյան

«26» հունիսի 2014թ.

«Սբ. Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալական ենթակառուցվածքների զարգացում»
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցներից Երևան քաղաքում՝ Սբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին հարակից տարածքներում վերստեղծել հին Երևանի ճարտարապետությանը բնորոշ ոճով, մոտ 2800 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր: Շենքերում գործելու են մանկական գեղագիտական կենտրոն, համայնքային, միայնակ մայրերի և երեխաների կենտրոններ՝ իրականցվելու են հոգևոր, սոցիալ մշակութային ծրագրեր: Կառուցված շենքերը և դրանց կառուցման համար ձեռք բերված հողամասերը նվիրաբերվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | «Երևան իմ սեր» հիմնադրամի նվիրատուներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778<br>Ք. Երևան, Եկմալյան 6, Հեռ.՝ (+37491) 23 04 00 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ թաղամաս՝ Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից տարածք և ք. Երևան. «Ձորագյուղ ազգագրական թաղամաս»՝ Սբ. Սարգիս եկեղեցուն հարակից տարածք<br><br>Ծրագիրն ընդգրկում է կրթական, մշակութային սոցիալական բնագավառները |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 1 515 000 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Երևանի կարիքավոր ընտանիքների երեխաները, միայնակ մայրերն ու նրանց երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվելու է 2013թ. մարտի 25-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2015 թ. դեկտեմբեր ամիսը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 2800 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր Երևան քաղաքի Պարոնյան և Կոզեռն փողոցների միջև ընկած տարածքում՝ Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարևանությամբ և Երևան քաղաքի «Ձորագյուղ ազգագրական թաղամասում»՝ Իսրաելյան փողոցի և Հրազդանի ձորի միջև ընկած տարածքում: Սբ. Սարգիս եկեղեցու հարակից տարածքում՝ կառուցվելու է մանկական գեղագիտական կենտրոն համալիր, որտեղ գործելու են նկարչության ստուդիա, քանդակի ստուդիա, գոբելենի և կիրառական արվեստի ստուդիաներ (595 քմ և մոտ 250 քմ օգտագործելի տանիք ), թատրոն և ունիվերսալ դահլիճ՝ մոտ 250 հանդիսատեսի համար՝ անհրաժեշտ տեխնիկական ապահովմամբ, երգչախմբային, պարային խմբակների սենյակներ (մոտ 724 քմ), համակարգչային կենտրոն, գրադարան, տեխնիկական մոդելավորման կենտրոններ (մոտ [illegible] քմ), մարզական մասնաշենք (մոտ 108 քմ) կառուցվելու է նաև բացօթյա ամֆիթատրոն: Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից կառուցվող շենքերից մեկը |

Լ. 7/813



Լ. 7/813

| | | |
|---|---|---|
| | | նախատեսված է անվճար հատկացնել միայնակ մայրերի և երեխաների կարիքներին (մոտ 400 քմ), ևս մեկ շենք հանդիսանալու է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն օժանդակ շինություն՝ անվճար հատկացվելու է Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավորների և համայնքի հոգևոր կարիքների համար (մոտ 400 քմ):<br>Կառուցվելիք շենքերի շուրջ նախատեսվում է իրականացնել ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ, որպեսզի կառուցվելիք շենքերը Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և միմյանց հետ միասին ունենան միասնական համալիրի տեսք և ծառայեն համայնքի հոգևոր-մշակութային պահանջներին:<br>Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով<br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2013 հունվար – մայիս ամիսների ընթացքում) – մոտ 30.000.000 ՀՀ դրամ<br>բ) Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից հողամասերի փոխանցում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (2014թ. մայիս – հուլիս ամիսների ընթացքում) 516.624.000 ՀՀ դրամ<br>գ) ընդհանուր շինարարության աշխատանքները (2013 մարտ - 2015 դեկտեմբեր ամիսների ընթացքում) մոտ 950.000.000 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 1 000 000 000 ՀՀ դրամ:<br>• Ճարտարապետական նախագծերի՝ կառուցվելիք շենքերի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում – մոտ 30.000.000 ՀՀ դրամ:<br>• Շինարարական ընկերությունների հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային և շինարարական աշխատանքներ – մոտ 800 000 000 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| | | • Շինանյութերի և ներքին հարդարման և կահավորանքի ներմուծում – մոտ 150 000 000 ՀՀ դրամ<br>• Էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման, գազի մատակարարման և այլ համակարգերին միացման աշխատանքներ,<br>• Հեղինակային հսկողության և տեխնիկական վերահսկողության իրականացում<br>• Խորհրդատվական, աուդիտորական ծառայություններ<br>• Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան<br>Հայաստանյայց առաքելական եկեղեցի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | • Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 623 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9108-14 և N 06/3-3/7465-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 02/4190-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 10,925,000 դրամ արժողությամբ «Հին Վեհարանի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լ.Ա.Ն.Ա. Էդեն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03531534) 2014 թվականի մայիսի 29-ին կնքված N ԼՎ-002-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեփական արտադրության փայտե կահավորանքի տրամադրում և տեղադրում՝ 10,925,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«26» հունիսի 2014 թ.

## Հին Վեհարանի կահավորում

## ԾՐԱԳԻՐ

ա-7/բ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին Վեհարանի համար Լ.Ա.Ն.Ա. էդեն ՓԲԸ-ից փայտե կահավորանքի ձեռք բերումն ու տեղադրումն է: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 10,925,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակիցները և հյուրերը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հունիսի 2014թ. – 31 սեպտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կահավորել Հին Վեհարանը:<br>Աշխատանքներն իրականացվելու են «Լ.Ա.Ն.Ա. էդեն» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 03531534, ՀՀ, Ք. Երևան, Քանաքեռ 1-ին փող., թիվ 12) կողմից՝ պայմանագիր N ԼՎ-002-14 պայմանագիր կնքված 29.05.2014թ.՝ 10,925,000 ՀՀ դրամով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 հունիսի 2014թ. – 31 սեպտեմբերի 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել փայտե կահավորանքի ձեռք բերում և տեղադրում՝ 10,925,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

√

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 624 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 11-ի N 3/3.8-2/8719-14 և հունիսի 12-ի N 06/3-3/7113-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 02/4059-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունիսի 12-ի N 03/07-1/6617-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 11–ի N 01/2627-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,142,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված N ԱՎ-Մ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 1,142,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» հունիսի 2014թ.

«ՀՀ Շիրակի մարզի Աշոցք գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Շիրակի մարզի Աշոցք գյուղի միջնակարգ դպրոցը անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակությունների միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.142.000,00 դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի Աշոցք գյուղի դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունիսի 02-ից մինչեւ 2014թ օգոստոսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Համակարգչային սարքավորումների ձեռքբերում, տեղափոխում և անհատույց հանձնում 1.142.000 դրամ արժողությամբ սույն թվականի հունիս-օգոստոսի ժամանակահատվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանից՝ ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի համաձայն՝ համակարգչային սարքավորումների ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 1.142.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության եւ կրթության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 625 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԻՏՈՒՄԻ ՆԵՐԿՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 3/3.8-2/8986-14 և հունիսի 12-ի N 06/3-7/7047-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 02/4104-14 և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N 01/14.1/6704-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 4,000,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԲԱՐՍԵԼ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00053775) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված N B-01/14 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բիտումի ձեռքբերման ու Հայաստանի Հանրապետություն փոխադրման աշխատանքների կազմակերպման դիմաց վարձավճար՝ 560,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» հունիսի 2014թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող ռազմավարական նշանակության ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հեռուստամարաթոնի արդյունքում հանգանակված միջոցներով |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 4.000.000.000,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն |

7/2



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունիսի 02-ից մինչեւ 2015թ. հունիսի 31ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ հունիսի 02-ից մինչեւ 2015թ. հունիսի 31ը 17.000 տոննա բիտումի ներկրում 3.990.000.000,00 ՀՀ դրամ արժողությամբ:<br><br>Նախատեսվում են գործարքներ վերոնշյալ բիտումի ծեռքբերման և Հայաստան տեղափոխման կազմակերպման վերաբերյալ՝10.000.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար 17.000 տոննա բիտումի ներկրում՝ 3.990.000.000,00 ՀՀ դրամ նախատեսվող արժեքով:<br><br>Ներկրվող բիտումի ծեռքբերման ու Հայաստան փոխադրման ծառայությունների համար նախատեսվող ծախսեր՝ 10.000.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

7/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 626 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-ՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՆՈՐՔԻ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-Ի 1-ԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7804-14 և N 06/3-3/7747-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 02/4407-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 24-ի N ՖԲ/ԱնՄ-4/4888-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,600,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի վերանորոգման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2014 թվականի հունիսի 10-ին կնքված N ՀՀ/ՆՆ-06/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի վերանորոգման շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«16» հունիսի 2014թ.

« Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «ՆՈՐՔ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-ի
1-ին մասնաշենքի վերանորոգման նախագծում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Երևան քաղաքի «Նորք տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում բնակվող ծերերի կեցության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.600.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն Երևան քաղաքի «ՆՈՐՔ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-ը: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունիսի 10-ից մինչեւ 2014թ. սեպտեմբերի 10-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հայաստանի Հանրապետություն Երևան քաղաքի «ՆՈՐՔ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-ի առաջին մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի վերանորոգման նախագծում և փորձաքննություն՝ 1.600.000,00 ՀՀ դրամ արժողությամբ 2014թ հունիսի 10-ից մինչեւ 2014թ. սեպտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքի «Նորք տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի վերանորոգման նախագծում՝ 1.500.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն՝ 100.000,00 դրամ արժեքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 627 - Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓԱԿ ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7807-14 և N 06/3-3/7768-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 02/4408-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N ՖԲ/ԱնՄ-4/4923-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 24-ի N 01/2789-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 68,687.100 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տարածքում փակ լողավազանի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Շինկարկաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05521676) 2014 թվականի հունիսի 5-ին կնքված N ՀՀ/Լ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տարածքում փակ լողավազանի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 68,007,100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՅԿԱՍԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536845) 2014 թվականի հունիսի 5-ին կնքված N ՀՀՏՀ-03/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տարածքում փակ լողավազանի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 680,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

V

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«18» հունիսի 2014թ.

« Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տարածքում փակ լողավազանի կառուցում »

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հաշմանդամ երեխաների կեցության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 68.687.100,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ը |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունիսի 05-ից մինչեւ 2014թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի հունիսի 05-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում փակ լողավազանի կառուցում՝ 68.687.100,00 ՀՀ դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Շինկարկաս» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տարածքում հաշմանդամ երեխաների համար փակ լողավազանի կառուցում՝ 68.007.100,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՀԱՅԿԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 680.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 628 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2-ՐԴ ՀԱՐԿԻ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 3/3.8-2/8987-14 և N 06/3-3/7313-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 հունիսի 17-ի N 02/4106-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N ԱՄ/22.2/5966-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 43,226.91 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի շինվերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի հունիսի 4-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինվերանորոգման աշխատանքների իրականացում՝ 43,226.91 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«04» հունիսի, 2014թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «ՀՀ ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի շինվերանորոգում»

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել շարունակական բժշկական կրթության մատչելությանը և տարեկան գրադարան հաճախող առողջապահական ոլորտի մինչև 50 000 մասնագետների մասնագիտական զարգացմանը՝ ՀՀ Առողջապահության Նախարարության Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկը վերանորոգելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում |
| 3. | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Մ. Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 29/3<br>Բնագավառը՝ առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է $ 43,226.91 (Քառասուներեք հազար երկու հարյուր քսանվեց ԱՄՆ դոլար և իննսունմեկ ցենտ) համարժեք ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարան ՊՈԱԿ, ք. Երևան, Ռուբինյանց փ. 29/3 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | 4 հունիսի, 2014թ - 04 հոկտեմբերի, 2014 թ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է Հանրապետական գիտաբժշկական գրադարանի 2-րդ հարկի վերանորոգումը, որը ներառում է ընթերցասրահը, համակարգչային և ուսուցողական կենտրոնների աշխատասենյակները: |



| | | |
|---|---|---|
| | | Վերը նշված աշխատանքները նախատեսվում է իրականացնել 04.06.2014 - 04.10.2014 ժամանակահատվածում:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է $ 43,226.91 (Քառասուներեք հազար երկու հարյուր քսանվեց ԱՄՆ դոլար և իննսունմեկ ցենտ) համարժեք ՀՀ դրամ:<br><br>Շինվերանորոգման աշխատանքների տեխնիկական բնութագիրը և ծավալաթերթը ներկայացված են պայմանագրին կից հավելվածներում: |
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Շինվերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր առ 04.06.2014, կնքված՝ «Կանակա» ԲԲԸ-ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի փողոց թիվ 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Պայմանագրի գումարը՝ $ 43,226.91 (Քառասուներեք հազար երկու հարյուր քսանվեց ԱՄՆ դոլար և իննսունմեկ ցենտ) համարժեք ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից: Եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 629 -Ա**

**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՑԻՆԿԱՊԱՏ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հունիսի 11-ի N 07/07.1/3048-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/8628-14 և հունիսի 10-ի N ՎՄ/3-3/6913-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 11-ի N 02/3838-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N ՍԿ/ԳՂ-2/2995-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 10-ի N 01/14.2/1783-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,708,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԼԵՎԱԴԱՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05304472) 2014 թվականի մայիսի 26-ին կնքված N WVA/TAL ADP/CM-14/002/Add.Order #1/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում՝ 1,708,200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

03 հունիսի 2014թ.

«Օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքին»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքի ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման նպատակով նշված համայնքին տրամադրել օգտագործված ցինկապատ խողովակներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնք<br>Բնագավառը՝ գյուղատնտեսություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 1.708.200 (մեկ միլիոն յոթ հարյուր ութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքի տեղական ինքնակառավարման մարմին |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. մայիսի 26-ից մինչև 2014թ. հուլիսի 11-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. մայիսի 26-ից մինչև 2014թ. հուլիսի 11-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքի ոռոգման ներքին ցանցի վերանորոգման նպատակով նշված համայնքին տրամադրել օգտագործված ցինկապատ խողովակներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.708.200 (մեկ միլիոն յոթ հարյուր ութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն օգտագործված ցինկապատ խողովակների մատակարարման պայմանագիր է կնքել «ԼԵՎԱԴԱՆ» ՍՊԸ-ի հետ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.708.200 (մեկ միլիոն յոթ հարյուր ութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Արտենի համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Թալինի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Կանադայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր ծրագրերով վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարությանն առընթեր Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ- 630 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-2/8541-14 և հունիսի 10-ի N ՎՄ/3-3/6918-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 02/3835-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 03/07-1/6540-14 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 11-ի N 01/15/2140 -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,935,188 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2014 թվականի մայիսի 19-ին կնքված N WVA/GAV ADP/HT-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,935,188 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրենի ժ.պ.
Շաղիկ Մարուխյան

30 մայիսի 2014թ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ջեռուցման համակարգ տեղադրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան, հեռախոս՝: +886-2-2175-1995* |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնք<br>Բնագավառը՝ կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 3.935.188 (երեք միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար հարյուր ութսունութ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոց |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 19 մայիսի 2014թ. - 02 հուլիսի 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ.-ի մայիսի 19-ից մինչև 2014թ. հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում ջեռուցման համակարգ տեղադրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցում:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է է 3.935.188 (երեք միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար հարյուր ութսունութ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

7/2



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցում ջեռուցման համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և պայմանագիր է կնքել «Բարսիս» ՍՊԸ-ի հետ:<br>Պայմանագրով նախատեսված է աշխատանքները սկսել 2014թ. մայիսի 19-ին և ավարտել ավարտել 2014թ. հուլիսի 2-ին:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է է 3.935.188 (երեք միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար հարյուր ութսունութ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Լճափ համայնքի միջնակարգ դպրոցի տնօրինության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Գավառի Տարածքային Զարգացման Ծրագրի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Թայվանի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի կատարման և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Գեղարքունիքի Մարզային զարգացման ծրագրի

Հուսիկ Սարգսյան / Հ. Սարգսյան

7/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 631 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ, ԿՈՒՐԹԱՆ ԵՎ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N 3/3.8-2/8925-14 և հունիսի 17-ի N 06/3-3/7315-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N 02/4108-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունիսի 13-ի N 03/07-1/6706-14 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2014 թվականի հունիսի 16-ի N 101/104.3.2/2800-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,891,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Կահույքի մատակարարում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան և Ագարակ համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04423145) 2014 թվականի մայիսի 26-ին կնքված N WVA/APAR ADP/SF-14/001/Add.Order#1/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի ձեռքբերում՝ 1,891,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

04 հունիսի 2014թ.

«Կահույքի մատակարարում ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան, Ազարակ համայնքներին»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան և Ազարակ համայնքների դպրոցներին՝ բարելավելու կիրակնօրյա խմբակների դասասենյակների գույքային պայմանները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Միացյալ Թագավորության աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom<br>Հեռ. +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան , Ազարակ համայնքներ<br>Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.891.000 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան, Ազարակ համայնքների դպրոցներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. մայիսի 26-ից –2014թ. հուլիսի 10-ը |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. մայիսի 26-ից մինչև 2014թ. հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում կահույք տրամադրվել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան, Ազարակ համայնքների դպրոցներին:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.891.000 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է մատակարար կազմակերպություն և պայմանագիր է կնքել «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի հետ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.891.000 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագիրը «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իրականացնելու է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Վարդաբլուր, Կուրթան, Ազարակ համայնքների դպրոցների և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ համագործակցությամբ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Ստեփանավանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Միացյալ Թագավորության աջակցող գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Արագածոտնի Մարզային զարգացման ղեկավար

Արմեն Բեժանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ - 632 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՁՅՈՒՆԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7802-14 և N 06/3-3/7749-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 02/4410-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 24-ի N ՖԲ/ԱնՄ-4/4887-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 24-ի N 01/2788-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 13,900,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի «Ձյունիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ"
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

19 հունիսի 2014թ

## «ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու քաղաքապետարանի «Զյունիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնակի վերանորոգում»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է մասնակի վերանորոգել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու քաղաքապետարանի «Զյունիկ» մանկապարտեզ» համայնքային ոչ-առևտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ): |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ աջակցող գրասենյակ Հասցե՝ 34834 Վեերհուզեր Վեյ Սաութ, Ֆեդեռալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝: 1-888-511-6548 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 13.900.000 (տասներեք միլիոն իննը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու քաղաքապետարանի «Զյունիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (ՀՎՀՀ 05514088), որն ընտրվել է մանկապարտեզի ծնողական խորհրդի դիմումի համաձայն: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 հունիսի 2014թ. - 25 սեպտեմբեր 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see nested table below) |

| Միջոցառումների նկարագրությունը | ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության ընտրություն | 15 հունիսի 2014թ.- 30 հունիսի 2014թ. | չի պահանջվում |
| Կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքում | 30 հունիսի 2014թ.- 10 հուլիսի 2014թ. | չի պահանջվում |
| «Գյումրու քաղաքապետարանի «Զյունիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքներ | 10 հուլիսի 2014թ. – 25 սեպտեմբերի 2014թ. | 13.900.000 դրամ |

Ծրագրի արժեքը կկազմի 13.900.000 (տասներեք միլիոն իննը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրով նախատեսվում է մասնակի վերանորոգել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու քաղաքապետարանի «Զյունիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը: Վերանորոգման աշխատանքների ամբողջ ծավալը կիրականացվի մրցույթով ընտրված մասնագիտացված շինարարական կազմակերպության կողմից, որի հետ կկնքվի համապատասխան կապալի պայմանագիր:<br>Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու է մանկապարտեզի 4 սանհանգույցների վերանորոգում, մասնավորապես՝<br>✓ պատերի և հատակի սալիկապատում,<br>✓ նոր դռների տեղադրում,<br>✓ պատերի և առաստաղի ներկում,<br>✓ նոր լուսավորության համակարգի տեղադրում,<br>✓ նոր ջրագծերի, կոյուղագծերի, լվացարանների և զուգարանակոնքերի տեղադրում:<br><br>Ծրագրի արժեքը կկազմի 13.900.000 (տասներեք միլիոն իննը հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի հետ համագործակցությամբ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի և Գյումրու Տարածքային Զարգացման Ծրագրի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մանկապարտեզի ծնողական խորհրդի հետ համատեղ կիրականացնի վերանորոգման աշխատանքների կանոնավոր մոնիտորինգ:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ [illegible] մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Շիրակի Մարզային զարգացման ղեկավար

Արտակ Օրդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ՈՐՈՇՈՒՄ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ- 633 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆԻԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵԿ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՀՈՐԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/07.1/3300-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7801-14 ու N 06/3-3/7745-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 02/4409-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 23-ի N 01/14.2/1936-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 19,067,427 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում խմելու ջրի ներքին ցանցին միացնելու համար մեկ խորքային հորի հորատում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՀՈՐԱՏԱՆՑՔ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00059808) և «ՆՈՐԱԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04203321) 2014 թվականի մայիսի 30-ին կնքված N WVA/APAR ADP/CW-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է հորատման և փորձաքամիչային աշխատանքների իրականացում («ՀՈՐԱՏԱՆՑՔ» ՍՊԸ)՝ 16,052,660 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի ու տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրման աշխատանքների իրականացում («ՆՈՐԱԿ» ՍՊԸ)՝ 3,014,767 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

13 հունիսի 2014թ.

«ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում խմելու ջրի ներքին ցանցին միացնելու համար մեկ խորքային հորի հորատում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում խմելու ջրի համակարգի բնականոն շահագործումը՝ տվյալ համայնքում խմելու ջրի ներքին ցանցին միացնելու համար մեկ խորքային հորի հորատման աշխատանքներ իրականացնելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Թայվանի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնք<br>Բնագավառը՝ ջրամատակարարում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է՝ 19.067.427 (տասնինը միլիոն վաթսունյոթ հազար չորս հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. մայիսի 30-ից մինչև 2014թ. օգոստոսի 13-ը |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. մայիսի 30-ից մինչև 2014թ. օգոստոսի 13-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում իրականացնել մեկ խորքային հորի հորատման աշխատանքներ՝ տվյալ համայնքի խմելու ջրի ներքին ցանցին միացնելու համար:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 19.067.427 (տասնինը միլիոն վաթսունյոթ հազար չորս հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 16.052.660 (տասնվեց միլիոն հիսուներկու հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Հորատանցք» ՍՊԸ-ի կողմից, իսկ 3.014.767 (երեք միլիոն տասնչորս հազար յոթ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Նորակ» ՍՊԸ-ի կողմից: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնքում մեկ խորքային հորի հորատման աշխատանքների կատարման համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը հայտարարել է բաց մրցույթ, որի արդյունքում հաղթող են ճանաչվել կոնսորցիում պայմանագրի հիման վրա համատեղ հանդես եկող «Հորատանցք» ՍՊԸ-ն և «Նորակ» ՍՊԸ-ն: Խորքային հորի հորատման աշխատանքները կատարելու համար պայմանագիր է կնքվել «Հորատանցք» ՍՊԸ-ի և «Նորակ» ՍՊԸ-ի հետ, որոնք պայմանագրում համատեղ հանդիսանում են որպես կապալառու:<br>«Հորատանցք» ՍՊԸ-ն իրականացնելու է հորատման աշխատանքները (հորատանցքի հորատում ռոտորա-պտուտակային եղանակով, հորատանցքի ամրակապում, արտախողովակային տարածության կավախծում, մանրակոպիճի լցում, ցեմենտածում) և փորձաքամիչային աշխատանքները (հորափորի լվացում ջրով, ջրի փորձնական արտամղում էրլիֆտով, ջրի նմուշառում և քիմիական և մանրէաբանական անալիզներ):<br>«Նորակ» ՍՊԸ-ն իրականացնելու է տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրման աշխատանքները:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 19.067.427 (տասնինը միլիոն վաթսունյոթ հազար չորս հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Ընդ որում՝ տվյալ ծրագրի շրջանակներում 16.052.660 (տասնվեց միլիոն հիսուներկու հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Հորատանցք» ՍՊԸ-ի կողմից, իսկ 3.014.767 (երեք միլիոն տասնչորս հազար յոթ հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) աշխատանքները կատարվելու են «Նորակ» ՍՊԸ-ի կողմից:<br>Նշված երկու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքները հաստատվելու են նրանցից յուրաքանչյուրի հետ ստորագրված կատարողական |

| | | |
|---|---|---|
| | | ակտերով և այդ ակտերի հիման վրա ներկայացված առանձին հաշիվ-ապրանքագրերով:<br>Ակնկալվում է, որ տվյալ ծրագրի շրջանակներում հարակից ճանաչված գործարքի ներքո ԱԱՀ-ից ազատում կտրամադրվի առանձին՝ համապատասխանաբար «Հորատանցք» ՍՊԸ-ի կողմից և «Նորակ» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքների գումարների չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Ապարանի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Արագածոտնի Մարզային զարգացման ղեկավար

Լիլիա Սարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ - 634 - Ա**

**քաղ. Երևան**

# «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ.» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9090 -14 և հունիսի 18-ի N 06/5-1/7380-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N ՖԲ/ԱնՄ-4/4751-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N 03/07-1/7065-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 16-ի N ԱՄ/22.2/5965-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռի (558 տեղ, 10,174 կգ ընդհանուր քաշով, 173,810 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,796 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բեռի բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզպետարաններ ու Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

7/14.14

˚Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.˚ԲԿ Հայաստանյան մասնաճյուղի անունով
˚˚ Հայկական միացյալ հիմնադրամի ˚˚ կողմից ուղարկված 558 տեղ 10174 կգ բրուտտո
քաշով և 173.810 ԱՄՆ դոլար արժողությամբ (ճանապարհածախսը 7796 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

| # | ապրանքի անվանում | տեղ | հատ | արժեք $ | քաշ բրուտտո կգ |
|---|---|---|---|---|---|
| 1 | անկողնու պարագա օգտ. - սպիտակեղեն | 24 | 871 | 6,986 | 421 |
| 2 | ծածկոց նոր | 15 | 198 | 1,980 | 186 |
| 3 | գլխարկ նոր | 4 | 428 | 1,306 | 38 |
| 4 | գոտի օգտ. | 1 | 169 | 200 | 13 |
| 5 | փողկապ օգտ |  | 148 | 275 | 2 |
| 6 | գործելու թել նոր | 1 | 75 | 320 | 21 |
| 7 | շարֆեր օգտ. | 3 | 246 | 600 | 27 |
| 8 | ձեռնոցներ օգտ |  | 19 | 84 | 1 |
| 9 | խաղալիք նոր | 1 | 33 | 200 | 6 |
| 10 | Ֆ.Նանսենի կիսանդրի | 1 | 1 | 10,000 | 85 |
| 11 | կոշիկներ նոր(զույգ) | 4 | 149 | 1,140 | 51 |
| 12 | կտորեղեն նոր(լոսկուտներ) | 8 | 667 | 2,799 | 147 |
| 13 | ուսումն.դիդակտիկ ձեռնարկներ օգտ. | 2 | 2 | 200 | 18 |
| 14 | գրքեր օգտ. | 9 | 489 | 1,435 | 219 |
| 15 | ուսապարկ օգտ. | 1 | 42 | 280 | 15 |
| 16 | պայուսակ Օգտ. | 1 | 26 | 260 | 11 |
| 17 | կանացի պայուսակ նոր | 1 | 23 | 230 | 9 |
| 18 | կանացի պայուսակ օգտ | 2 | 104 | 620 | 23 |
| 19 | տակդիրներ նոր | 26 | 7480 | 10,068 | 362 |
| 20 | Pentium IV համակարգիչ,ստեղնաշար,մոնիտոր օգտ. | 2 | 2 | 620 | 27 |
| 21 | հագուստ օգտ | 339 | 32241 | 111,780 | 6846 |
| 22 | հագուստ դեռահասների նոր | 9 | 586 | 3,839 | 144 |
| 23 | շապիկներ տրիկոտաժյա նոր | 11 | 759 | 3,348 | 149 |
| 24 | բուժ.պարագա/բաղնիքի աթոռ | 4 | 4 | 130 | 26 |
| 25 | բուժ.պարագա/աթոռ | 3 | 3 | 60 | 11 |
| 26 | բուժ.պարագա/թերապ.ճոճանակ օգտ. | 2 | 1 (կոմպլ) | 375 | 36 |
| 27 | բուժ.պարագա/զուգարանակոնք օգտ,. | 3 | 3 | 75 | 13 |
| 28 | բուժ.պարագա/հենակ օգտ. | 4 | 10 | 190 | 15 |
| 29 | բուժ.պարագա/քայլակ օգտ. | 9 | 18 | 640 | 86 |
| 30 | բուժ.պարագա/ձեռնափայտ օգտ. | 2 | 10 | 100 | 19 |
| 31 | հեծանիվ նոր | 45 | 45 | 11,250 | 936 |
| 32 | հեծանիվ օգտ. | 7 | 7 | 550 | 116 |
| 33 | անիվ նոր | 1 | 30 | 450 | 8 |
| 34 | ռետինե խցիկ(հեծանիվի կամերա) նոր | 5 | 92 | 920 | 54 |
| 35 | սաղավարտ նոր | 8 | 50 | 500 | 33 |
|  |  | 558 | 45,030 | 173,810 | 10,174 |

˚Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.˚ԲԿ կողմից հատկացվող ապրանքներ կազմակերպություններին

´Արաբկիր´ բժշկական համալիր- երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ

7/14.14

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հեծանիվ նոր | 1,500 | 6 հատ |
| անիվ նոր | 90 | 6 հատ |
| ռետինե խցիկ(հեծանիվի կամերա) նոր | 240 | 24 հատ |
| սաղավարտ նոր | 70 | 7 հատ |

ք.Գավառ,˝Բարի Հույս˝հաշմանդամ երեխաներին աջակցող ՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 6,265 | 22 արկղ |
| բուժ.պարագա/բաղնիքի աթոռ | 15 | 1 հատ |
| բուժ.պարագա/թերապ.ճոճանակ օգտ. | 375 | 1 հատ |
| բուժ.պարագա/զուգարանակոնք օգտ,. | 25 | 1 հատ |
| հեծանիվ նոր | 500 | 2 հատ |
| ռետինե խցիկ(հեծանիվի կամերա) նոր | 20 | 2 հատ |
| սաղավարտ նոր | 10 | 1 հատ |

ք.Երևան ˝Նազաշյան մանուկներ տուն˝երեխաների աջակցության կենտրոն

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| կտորեղեն նոր(լոսկուտներ) | 1,041 | 245 հատ |
| գրքեր օգտ. | 220 | 52 հատ |

ք.Չարենցավան ˝Ռեսուրս կենտրոն˝ ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 3,890 | 14արկղ |
| բուժ.պարագա/աթոռ | 20 | 1 հատ |
| բուժ.պարագա/հենակ օգտ. | 20 | 1 հատ |
| բուժ.պարագա/քայլակ օգտ. | 120 | 4 հատ |
| բուժ.պարագա/ձեռնափայտ օգտ. | 70 | 7 հատ |

գ.Դսեղի Հ.Թումանյանի անվ. միջնակարգ դպրոց

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - սպիտակեղեն | 870 | 154 հատ |
| գրքեր օգտ. | 200 | 41 հատ |
| ուսապարկ օգտ. | 280 | 42 հատ |
| հագուստ օգտ | 5,325 | 17 արկղ |

Ք.Գորիս ՛Գործընկերություն և ուսուցում՛ՀԿ

7/14.14

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - սպիտակեղեն | 1,145 | 169 հատ |
| գրքեր օգտ. | 290 | 145 հատ |
| կանացի պայուսակ օգտ | 200 | 44 հատ |
| հագուստ օգտ | 2,998 | 9 արկղ |

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-Կրթական կենտրոն ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - սպիտակեղեն | 1,400 | 223 հատ |
| գլխարկ նոր | 946 | 245 հատ |
| գոտի օգտ. | 200 | 169 հատ |
| փողկապ օգտ | 275 | 148 հատ |
| գործելու թել նոր | 320 | 75 հատ |
| շարֆեր օգտ. | 150 | 72 հատ |
| ձեռնոցներ օգտ | 40 | 8 հատ |
| կտորեղեն նոր(լոսկուտներ) | 1,431 | 313 հատ |
| գրքեր օգտ. | 525 | 156 հատ |
| պայուսակ օգտ. | 260 | 26 հատ |
| հագուստ օգտ | 6,065 | 17 արկղ |

ք.Երևան ՛՛Փրկություն՛՛ հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| կտորեղեն նոր(լոսկուտներ) | 327 | 109 հատ |
| կանացի պայուսակ օգտ | 420 | 60 հատ |
| հագուստ օգտ | 6,635 | 19 արկղ |

Խարբերդի հատուկ դպրոց ՊՈԱԿ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| տակդիրներ նոր | 9,725 | 7180 հատ |
| բուժ.պարագա/բաղնիքի աթոռ | 85 | 2 հատ |
| բուժ.պարագա/քայլակ օգտ. | 200 | 6 հատ |
| բուժ.պարագա/հենակ օգտ. | 50 | 3 հատ |
| բուժ.պարագա/ձեռնափայտ օգտ. | 30 | 3 հատ |

Գ.Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - սպիտակեղեն | 2,021 | 134 հատ |
| շարֆեր օգտ. | 300 | 98 հատ |
| Ֆ.Նանսենի կիսանդրի | 10,000 | 1 հատ |
| տակդիրներ նոր | 343 | 300 հատ |
| Pentium IV համակարգիչ,ստեղնաշար,մոնիտոր օգտ. | 620 | 2 հատ |
| հագուստ օգտ | 39,375 | 119 արկղ |

՛՛Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.՛՛ ԲԿ Հայաստանյան մասնաճյուղ

7/14.14

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| անկողնու պարագա օգտ. - սպիտակեղեն | 1,550 | 191 հատ |
| գլխարկ նոր | 180 | 93 հատ |
| շարֆեր օգտ. | 150 | 76 հատ |
| ձեռնոցներ օգտ | 44 | 11 հատ |
| խաղալիք նոր | 200 | 33 հատ |
| կոշիկներ նոր(զույգ) | 1,140 | 149 հատ |
| ուսումն.դիդակտիկ ձեռնարկներ օգտ. | 200 | 2 հատ |
| գրքեր օգտ. | 200 | 95 հատ |
| կանացի պայուսակ նոր | 230 | 23 հատ |
| հագուստ օգտ | 15,548 | 49 արկղ |
| հագուստ դեռահասների նոր | 1,992 | 298 հատ |
| հեծանիվ նոր | 1,750 | 7 հատ |
| հեծանիվ օգտ. | 550 | 7 հատ |
| սաղավարտ նոր | 70 | 7 հատ |
| ռետինե խցիկ(հեծանիվի կամերա) նոր | 120 | 12 հատ |

Մանկական առողջարարական ճամբարներ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ դեռահասների նոր | 1,847 | 288 հատ |
| շապիկներ տրիկոտաժյա նոր | 3,348 | 759 հատ |

Երեխաների աջակցության հիմնադրամ ՀԿ ք.Հրազդան

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| գլխարկ նոր | 180 | 90 հատ |
| հագուստ օգտ | 7,374 | 20 արկղ |
| բուժ.պարագա/բաղնիքի աթոռ | 30 | 1 հատ |
| բուժ.պարագա/աթոռ | 20 | 1 հատ |
| բուժ.պարագա/քայլակ օգտ. | 160 | 4 հատ |

՛՛Տիրամայր Հայաստանի կուսաստան՛՛ ք.Գյումրի

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| ծածկոց նոր | 1,980 | 198 հատ |
| հեծանիվ նոր | 7,500 | 30 հատ |
| անիվ նոր | 360 | 24 հատ |
| ռետինե խցիկ(հեծանիվի կամերա) նոր | 540 | 54 հատ |
| սաղավարտ նոր | 350 | 35 հատ |

Հայկական Կարիտաս Բարեսիրական կազմակերպության Փոքրիկ Իշխան կենտրոն

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 4,710 | 15 արկղ |

¨Լիարժեք Կյանք¨ ԲՀԿ ք.Ստեփանավան

7/14.14

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 4,650 | 14 արկղ |
| բուժ.պարագա/աթոռ | 20 | 1 հատ |
| բուժ.պարագա/զուգարանակոնք օգտ,. | 75 | 2 հատ |
| բուժ.պարագա/հենակ օգտ. | 120 | 6 հատ |
| բուժ.պարագա/քայլակ օգտ. | 160 | 4 հատ |

Նատալի մանկական ԲՀԿ Տավուշի մրզ գ.Դովեղ

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 5,490 | 15 արկղ |

Լուսածիր ԲՀԿ Տավուշի մրզ ք.Նոյեմբերյան

| ապրանքի անվանում | արժեք $ | քանակ |
|---|---|---|
| հագուստ օգտ | 3,455 | 9 արկղ |



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 635 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 12-ի N 3/3.8-2/8807-14 և հունիսի 13-ի N 06/3-7/7121-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 12-ի N ԱՄ/22.2/5875-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (բժշկական պարագաներ, դեղորայք, լաբորատոր ախտորոշիչ նյութեր, օրթոպեդիկ կոշիկներ և հաշմանդամի սայլակներ, 56 տեղ, 3,660 կգ ընդհանուր քաշով, 84,608.30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,950 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական ծրագրերի զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ- 636 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 12-ի N 3/3.8-2/8810-14 և հունիսի 13-ի N 06/3-7/7133-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված մետաղյա ամրակային դետալները (2 տեղ, 114 կգ ընդհանուր քաշով, 3,788.6 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 799.77 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի մայիսի 16-ի N Մ-450-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ- 637 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 3/3.8-2/9263-14 և N 06/3-7/7650-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի մայիսի 16-ի N Մ-450-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 10-րդ կետի 5.3-րդ ենթակետը «տեսահսկման համակարգերի ապրանքներ» բառերից հետո լրացնել «և հակահրդեհային անվտանգության համակարգի սարքեր, սարքավորումներ, պարագաներ» բառերով:

2. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված հակահրդեհային անվտանգության համակարգի սարքավորումները և պարագաները (1 տեղ, 14 կգ ընդհանուր քաշով, 3,619 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 368.27 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» Մ/Տ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 638 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-359-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 11-ի N 3/3.8-2/8734-14 և հունիսի 12-ի N 06/3-3/7112-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անի Բեգիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-359-Ա որոշմամբ (2014 թվականի մարտի 14-ի N Մ-220-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N 04/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 1,320,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 639 -Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N 3/3.8-2/9264-14 և N 06/3-7/7583-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունիսի 23-ի N ՖԲ/ԱնՄ-4/4835-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Հայ օգնության միություն» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (16 տեղ, 2,535.15 կգ ընդհանուր քաշով, 94,966.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5852 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:
2. «Հայ օգնության միություն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ա․ 7/7.5

## Բեռի բաշխման ցանկ

*/Սպորտային կոշիկներ և բժշկական զուգագուլպաներ/*

| | | Սպորտային կոշիկ | | Զուգագուլպա | |
|---|---|---|---|---|---|
| N | ՀՕՄ-ի Երևանի մասնաճյուղեր | զույգ | արժեք / դոլար/ | զույք | արժեք/դոլար/ |
| 1 | Դավթաշեն | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 2 | Կենտրոն/Կռունկ | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 3 | Արաբկիր/ Մգրո | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 4 | Մաշտոց | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 5 | Մալաթիա-Սեբաստիա | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 6 | Նոր -Նորք | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 7 | Ակնունի/Ավան | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 8 | Քանաքեռ-Զեյթուն | 100 | 4988.74 | 10 | 180.04 |
| 9 | Շենգավիթ | 100 | 4988.74 | 10 | 180.04 |

| N | | զույգ | արժեք /դոլար/ | զույգ | արժեք /դոլար/ |
|---|---|---|---|---|---|
| 10 | Զոհված ազատամարտիկների ընտանիքներին | 230 | 11474.14 | 14 | 252.05 |

| N | | զույգ | արժեք /դոլար/ | զույգ | արժեք/ դոլար/ |
|---|---|---|---|---|---|
| 11 | Տիրամայր Հայաստանի Կոմիտեին | 700 | 34921.20 | 100 | 1800.39 |
| | Ընդամենը | 1830 | 91294 | 204 | 3672.8 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 640 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-203-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9100-14 և հունիսի 23-ի N 06/3-4/7654-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ձեռք բերված սարքավորումը (թվային լուսանկարող և լուսանկարը մշակող համակարգ, 1 տեղ, 232 կգ ընդհանուր քաշով, 25,750 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» Տ/Մ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Թվայնացման օգնությամբ վաղ շրջանի տպագրված քարտեզների, ամսագրերի, թերթերի երկարաժամկետ պահպանում և դրանց հասանելի դարձնելը համացանցում» ծրագրի մասին» N Մ-203-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ- 641 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7806-14 և N 06/3-3/7769-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի մայիսի 16-ի N Մ-450-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեմքար» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06106307) հետ 2014 թվականի ապրիլի 30-ին կնքված N 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեսապատման աշխատանքների կատարման նպատակով Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հուշայան անհրաժեշտ հատվածները պահանջվող շինարարական նյութերն ու աշխատողներին բարձրացնելու ծառայությունը՝ 9,788,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վեմքար» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06106307) 2014 թվականի հունիսի 2-ին կնքված N 1/Ա2. պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում՝ 8,960,400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ- 642 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N Մ-471-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7899-14 և N 06/3-3/7748-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 23-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-471-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետում ու 10-րդ կետի 4-րդ և 4.1-ին ենթակետերում «230 000 000» թիվը փոխարինել «70,000,000» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 4-րդ ենթակետում ու 10-րդ կետի 5-րդ և 5.1-ին ենթակետերում «70 000 000» թիվը փոխարինել «230,000,000» թվով.

3)որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում ««Երևաննախագիծ»» բառերը փոխարինել ««Արբակ և որդիներ» ՍՊԸ» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էսենդ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00110738) հետ 2014 թվականի հունիսի 16-ին կնքված N 02/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 1400 խոր. մետր ավազի ձեռքբերում՝ 4,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վարդաշենի հանք» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00820783) հետ 2014 թվականի հունիսի 16-ին կնքված N 03/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2700 խոր. մետր խճի ձեռքբերում՝ 14,850,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Նոր Գինդ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00801756) հետ 2014 թվականի հունիսի 16-ին կնքված N 04/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 13,950 կգ FFN հավելանյութի ձեռքբերում՝ 9,939,375 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մետրոշինվերանորոգում» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02200317) հետ 2014 թվականի հունիսի 16-ին կնքված N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «500 հանդիսատեսի համար սահադաշտով մարզաառողջարարական համալիր» օբյեկտի երկաթ-բետոնյա կմախքի կառուցվածքի աշխատանքների իրականացում՝ 135,682,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Արբակ և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02228418) հետ 2014 թվականի հունիսի 16-ին կնքված N06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «500 հանդիսատեսի համար սահադաշտով մարզաառողջարարական համալիր» օբյեկտի նախագծման աշխատանքների իրականացում՝ 27,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 04000255) հետ 2014 թվականի հունիսի 19-ին կնքված N 76-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 1700 տոննա պորտլանդցեմենտի ձեռքբերում՝ 68,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02800538) հետ 2014 թվականի հունիսի 20-ին կնքված N 200614/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 380 տոննա ամրանի ձեռքբերում՝ 125,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 643 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 3-ի N 3/3.8-2/8335-14 և հունիսի 4-ի N ՎՄ/5-1/6691-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 3-ի N ԱՄ/22.2/5421-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (6 տեղ, 671.4 կգ ընդհանուր քաշով, 104,340 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,773.92 եվրո, «Ջվարթեոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 644 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 4-ի N 3/3.8-2/8392-14 և N ՎՄ/3-7/6701-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 3-ի N ՄԽ/22.2/5452-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (4 տեղ, 450.3 կգ ընդհանուր քաշով, 67,680 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,915.61 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 645 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 4-ի N 3/3.8-2/8391-14 և N ՎՄ/18-4/6736-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 3-ի N ՍԽ/22.2/5458-14 եզրակացությունները, **որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (36 տեղ, 332.1 կգ ընդհանուր քաշով, 50,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,468.39 ԱՄՆ-ի դոլար, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ- 646 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9097-14 և հունիսի 20-ի N 06/3-4/7582-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 17-ի N ԱՄ/22.2/5980-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պլաստմասայե ներարկիչներ ասեղներով, ստվարաթղթե տուփեր, 27 տեղ, 3,771 կգ ընդհանուր քաշով, 30,376.73 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 647 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 10-ի N 3/3.8-2/8676-14 և հունիսի 9-ի N ՎՄ/3-7/6875-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 6-ի N ԱՄ/22.2/5594-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (բժշկական սարքավորումներ՝ իրենց պահեստամասերով, բժշկական պարագաներ, 2 տեղ, 67.3 կգ ընդհանուր քաշով, 4,038,900 ճապոնական յենին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ - 648 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/7874-14 և N 06/3-3/7916-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունիսի 30-ի N 03/4503-14 և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի 2014 թվականի հունիսի 25-ի N 01/13.1/2139-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 8,206,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մուլտի Ռեստ Հաուս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555281) 2014 թվականի հունիսի 19-ին կնքված N WVA/CO/CC/SER/12/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման համար տարածքի տրամադրում ու հարակից ծառայությունների մատուցում՝ 8,206,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝

Ժիրայր Եդիլյան

30 հունիսի, 2014թ.

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է քառօրյա վերապատրաստման միջոցով զարգացնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 110 կիրակնօրյա դպրոցների 130 ուսուցիչների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերներյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ աջակցող գրասենյակ<br>Հասցեն՝ 34834, Վեերհուզեր, Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ. 1-888-511-6548 |
| 4. | Ծրագրի կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր<br>Բնագավառը՝ հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8.206.000 (ութ միլիոն երկու հարյուր վեց հազար ) ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 110 կիրակնօրյա դպրոցների 130 ուսուցիչներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 07 - 10 հուլիսի 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2014թ. հուլիսի 7-ից մինչև 2014թ. հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում քառօրյա վերապատրաստման դասընթացներ կազմակերպել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 110 կիրակնօրյա դպրոցների 130 ուսուցիչների համար:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8.206.000 (ութ միլիոն երկու հարյուր վեց հազար ) ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների քառօրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպչական աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել «Մուլտի Ռեստ Հաուս» ՍՊԸ-ի հետ: Ծրագրի արժեքը կազմում է 8.206.000 (ութ միլիոն երկու հարյուր վեց հազար ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ - 649 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 2-ի N 3/3.8-2/8253-14 և մայիսի 30-ի N ՎՄ/3-4/6491-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում ավելացնել «ավարտել 2014 թվականի նոյեմբերին» բառերը:

2. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուգլիֆտ» ԴԱՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009839) 2014 թվականի փետրվարի 17-ի N 010/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լիֆտերի տեղադրում՝ 3,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 հունիսի 2014 թվականի N Մ -650- Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ- 442 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 19-ի N 3/3.8-2/9098-14 և N 06/3-4/7471-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (1548 տեղ, 18,560 կգ ընդհանուր քաշով, 231,146 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, որից 3,590 ԱՄՆ-ի դոլար է կազմում փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ
27 հունիսի 2014 թվականի N Մ - 651 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-2/9174-14 և 20-ի N 06/3-5/7516-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բագրատ Առաքելյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 40509141) 2014 թվականի հունիսի 9-ին կնքված N 035/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հացի մատակարարում՝ 1,824,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հունիսի 2014 թվականի N Մ - 652 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N2)**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/7805-14 և 2014 թվականի հունիսի 19-ի N 06/3-3/7463-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն 93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2014 թվականի հունիսի 6-ին կնքված N 034/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 4,508,352 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ